ԿԸՀ 2024 թ. Հայաստանի և այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2024թ. արժեքը նախորդ տարվա համեմատ մնացել է նույնը՝ **47** միավոր 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակի վրա:

180 երկիր ներառող ԿԸՀ դասակարգման աղյուսակում Հայաստանը Խորվաթիայի հետ կիսում է **63-64-րդ** տեղերը (2023 թ.-ին Հայաստանը գրավում էր 62-րդ տեղը):

Տվյալ երկրի ԿԸՀ համաթիվը հանդիսանում է այդ երկրի համաթիվը հաշվարկելու համար օգտագործված բոլոր աղբյուրների համար հաշվարկված համաթվերի միջին թվաբանականը: Մասնավորապես, Հայաստանի ԿԸՀ 2024թ. համաթիվը (47) հավասար է այն հաշվարկելու համար օգտագործված 6 աղբյուրների համաթվերի միջին թվաբանականին: Այդ աղբյուրներն են՝ Բերթելսմանի հիմնադրամի 2024 թ. տրանսֆորմացիոն համաթիվը (51 միավոր, 2023-ին՝ 49), Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող պետություններ 2024թ. զեկույցի *Կոռուպցիա* ենթահամաթիվը (44 միավոր, 2023-ին՝ 44), Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2024թ. վարկանիշը (46 միավոր, 2023-ին՝ 47), Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2024թ. ուղեցույցը (33 միավոր, 2023-ին՝ 32), Ժողովրդավարության բազմազանության ծրագրի 2024 թ.-ի հրապարակումը (50 միավոր, 2023-ին՝ 55) և Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման 2024թ. հրապարակումը (56 միավոր, 2023-ին՝ 54):[1]

Գծապատկեր 1

[1] Հարկ է նշել, որ Հայաստանի ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվել են այն նույն աղբյուրները, ինչ նախորդ երեք տարիներին՝ 2021, 2022 և 2023 թվականներին:

Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստանի ԿԸՀ արժեքները 2012-2024թթ. ընկած ժամանակահատվածում: Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ՝ Հայաստանը, ներառված է Արևելյան Եվրոպա - Կենտրոնական Ասիա տարածաշրջանի մեջ:
Ինչպես և նախորդ չորս տարիներին, Հայաստանի ԿԸՀ արժեքը 2024 թվականին (**47**) ավելի բարձր է ԿԸՀ համաշխարհային միջին արժեքից (այն պահպանվել է **43**): Այն նաև գերազանցում է հարևան երկրների (բացի Վրաստանից) և ԵԱՏՄ մյուս երկրների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան և Ղրղզստան) 2024 ԿԸՀ արժեքները: Իր հարևաններից **Թուրքիան** (**34**) կիսում է **107-113**-րդ տեղերը, **Իրանը (23)՝ 151-153**-րդ տեղերը, իսկ **Ադրբեջանը** (**22**)՝ **154-157**-րդ տեղերը: ԵԱՏՄ երկրներից **Ղազախստանը** (**40**) զբաղեցնում է **88-91**-րդ տեղերը, **Բելառուսը** (**33**)՝ **114-120**-րդ տեղերը, **Ղրղզստանը** (**25**)՝ **146-148**-րդ տեղերը և **Ռուսաստանը** (**22**)՝ **154-157**-րդ տեղերը:

Գծապատկեր 2

Գծապատկեր 2-ում ներկայացված է Արևելյան Եվրոպա - Կենտրոնական Ասիա տարածաշրջանի երկրների ԿԸՀ արժեքները: Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանը,
53-55-րդ տեղերում գտնվող **Վրաստանից (53)** հետո, երկրորդ տեղում է տարածաշրջանի երկրների շրջանում:

Գծապատկեր 3



Գծապատկեր 3-ում ներկայացված են Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների, ներառյալ Հայաստանի, 2024 ԿՀՀ արժեքները:

Ինչպես երևում է Գծապատկերից՝ Հայաստանը ԵՄ երկրների մեջ նույնիսկ միջին հորիզոնականներում չէ: Սա նշանակում է, որ Հայաստանը դեռևս շատ անելիքներ ունի՝ գրանցելու համար իրական առաջընթաց կոռուպցիայի դեմ պայքարում: